Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին.
Հին օրերու պէս կը բախեն բաժակ, ու կ՚ըմպեն գինին։

Հանրատուներու դռներուն առջեւ ահա՛ քովէ քով
Կը շաղակրատեն անսի՛րտ դիակներ, կը շաղակրատեն.
Կը մտենան ինձ, կուրծքիս կը փարին և նշդրակներով
Սի՛րտս կը ճեղքեն, ԸԶԳԱՅՈՒՄԻՍ դէմ, սի՛րտս կը ճեղքեն.

Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին.
Հին օրերու պէս կը բախեն բաժակ ու կ՚ըմպեն գինին։

Տե՛ս, խաւարին մէջ կը հետեւին ինձ, կը հալածեն զիս
Առանց գլուխի շարժող մարմիններ, առանց գլուխի,
Գա՜նկըս կը փընտռեն և ՄՏԱԾՈՒՄԻՍ հրրացան կ՚ուղղեն՝
Որպէսզի մեռնի՛ ըստեղծողն իմ մէջ, որպէսզի մեռնի։

Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին,
Հին օրերու պէս կը բախեն բաժակ, ու կ՚ըմպեն գինին։

4 Մայիս 1934

ՀՐԱՉ ՔԱՋԱՐՆԻ

ՏՕՆԱԿԱՆ ԱՅԳ

Զանգակներն ի՞նչ ունին որ մօտն ու հեռուն
Կը զողանջեն, կը տզզան.

Երգ մ՚է անհուն՝ մերթ ոսկի, մերթ արծաթի,
Ըստուերին մէջ աւօտեան։

Ցամքը ճօճքով մը կը հայցես, ոսկի ձայն,
Երկընքին մէջ քնէած։

Հնչուն երգին մէջ կը գանչէ քու զողանջդ
Արծաթի ձայն – կը պաշտեմ,

Կը պաշտեմ – Օ՜ն ըսէ, ոսկի նօթ – Ալիքն
Երկնքէն կախ է, հանդարտ.

Բայց ձայն մը խոր՝ սիրոյն ներքեւ կ՚որոտայ
Կարծես ըզձին պատասխան.

Գերեզմանի ձայնն է այն։

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Ց. ՓԱՍՔՈՒԼԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՓԵՍԱՑԻ (ԵՊՍ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ, 1934, էջ 52)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ը.

Վասն սակաւատեւ խաղաղութեանն, որ ընդ այն ժամանակս եղեւ, ասա երիս յերկրին Ասորւոց. և ասպատակ արքային Պարսից յերկիրն Հռոմոց, ի Հայաստան եւ ի Կապադովկիա։

Յետ այսր ամենայնի խաղաղութիւն հաշտութեան լինէր յերկրին Ասորւոց զամս երիս, վճարելով երիս տաղանդս վասն երից ամաց, բայց ի Հայաստան պատերազմ դեռ յերկոցունց կողմանց եւս ունէր մղել։ Եւ քանզի զառաջին մասն իրացս վերագոյն ուրեմն յեկեղեցական պատմութեանս սակաւուք պատմեցի, թէ ո՛րպէս Պարսկահայք կամեցան մոռանել ընդ իշխանութեամբ Հոռոմոց, այժմ մնայ ինձ զայն ասել որ ինչ յետ այնր ժամանակի պատահեաց։ Թագաւորն Պարսից իբրեւ էառ զԴարան՝ հրապարատացեալ յանձն իւր խրոխտայր կուրութեամբ. եւ համարեալ կարծէր եթէ չիք այնուհետեւ երկիւղ պատերազմի յերկրին Ասորւոց, մեծաւ յուսով դիմեաց ի Հայաստան, հատատելով զերեսս իւր ի սահմանագլուխ անդր իւրոյ բաժնին Հայոց, ի Թէոդոսուպոլիս, ի Կեսարիա, ի Կապադովկիա և յայլ քաղաքս կողմանցն։ Մինչդեռ նա յայս միտս քաջալերէր, առաքեցաւ առ նա լռակացն Թէոդորոս հրեշտակութեամբ, եւ ետես զնա վառեալ կազմութեամբ ի պատերազմ։ Կալաւ զնա թագաւորն առ իւր. և մինչ խնդրէր լռակացն արձակել զինքն՝ նա ծաղրելով ինն ասէր ցնա, եկ ի միասին երթիցուք ի Թէոդոսուպոլիս Հայոց, պարտ է քեզ ընդ իս երթալ անդր, զի լուանաս ի ջերմուկսն և հանգչիս և ապա արձակեմ զքեզ երթալ։ Եւ այսպէս առեալ զնա ընդ իւր բերէր ի Հայաստան, վստահ լինելով երթալ անդր և անաշխատ առնուլ զքաղաքն։ Զայն լուեալ զօրաց Հոռոմոց, թէ եւ երկնչէին յանուանէ թագաւորին, սակայն կազմեալ պատրաստէին ըստ օրինի մարտի ընդդէմ նորա։ Իբրեւ տեսանէր զմեծ բազմութիւն զօրացն, լքանէր յանձն իւր, զի ասեն, աւելի քան զ 120,000 լինել զօրացն[1], որ մնային զալստեան նորա, և կազմէին ի պատերազմ ընդդէմ նորա. զահի հարկանէր պարսիկն, խոյս տայր, երթայր յայլ քաղաք։ Եւ սոքա զհետ նոցա պնդէին հասանէին առ նոսա և վարէին անտի եւս։ Եւ իբրեւ երթային մերձ հասանէին ի զօրս թագաւորին՝ առաւել եւս ճանաչէին զզօրութիւն իւրեանց թէ մեծ է յոյժ, և արհամարհէին զնովաւ։ Տեսեալ զայս ամենայն թագաւորին և գիտացեալ թէ ո՛չ եւս կամաց իւրոց յաջողէ, դարձաւ ընդ կողմանս լերանցն հիւսիսոյ, դէպ ի Կապադովկիա, կամելով երթալ առնուլ զԿեսարիա։ Զայն տեսեալ Հոռոմոց, ընդէմ դարձան նմա, և յառաջագոյն քան զնա եկին ի Կապադովկիա։ Կալան զառաջ նորա և սպասէին նմա ի մէջ լերանցն[2] Կապադովկիոյ, ուր և ար